/ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ/
ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

•Գործուղված անձինք
ՀՀ վիճակագրական կոմիտեի նախագահ՝ Ս. Մնացականյան

•Երկիր/քաղաք/ ժամկետ
Շվեյցարիայի Համադաշնություն/ժնև/21.02.-25.02.2022թ.

▪Նպատակը
ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի նիստ

▪ Քննարկված թեմաները
Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի Բյուրոյի (Ս. Մնացականյանը հանդիսանում է Բյուրոյի փոխնախագահ) հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.
I.Բացումը Պադրաիգ Դալտոնի կողմից
II.Ընտրված վիճակագրական բնագավառների խորացված վերանայումներ
ա. Համագործակցություն մասնավոր տվյալների տրամադրողների հետ - քննարկման և առաջարկությունների համար

բ. 2022-2023 թթ. և ԵՎԿ-ի 2023թ. լիագումար նստաշրջանում խորացված վերանայման թեմաների ընտրություն - քննարկման համար

III.ՄԱԿ-ի Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ՄԱԿ ԵՏՀ) վիճակագրական աշխատանքներ և Եվրոպական վիճակագիրների կոնֆերանսի մասնագետների թիմեր
ա. Միգրացիայի վիճակագրություն (տեխնիկական առաջադրանք) – քննարկման համար

բ. Աղքատության սուբյեկտիվ չափումներ (տեխնիկական առաջադրանք) – քննարկման համար

գ. Վիճակագրությունը ԿԶՆ-ի համար (տեխնիկական առաջադրանք) – քննարկման համար

դ. Ազգային վիճակագրական գրասենյակների դերը կլիմայական ազգային նպատակներին հասնելու գործում (տեխնիկական առաջադրանք) – գրավոր խորհրդակցության միջոցով քննարկման համար

ե. Պաշտոնական վիճակագրության մոդեռնիզացում – քննարկման և առաջարկությունների համար

զ. Covid-ից հետո նորարարությունը պահպանելու համար Գլխավոր վիճակագիրների սպրինտ (հայեցակարգ) – քննարկման համար

է. Վիճակագրական օրենսդրություն – քննարկման համար

IV.2022թ. ԵՎԿ-ի լիագումար նստաշրջանի նախապատրաստում
ա. Համատեղ նստաշրջան Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) և Վիճակագրության և վիճակագրական քաղաքականության կոմիտեի (CSSP) հետ - համագործակցություն մասնավոր տվյալների տրամադրողների հետ (նստաշրջանի առաջարկ) – քննարկման և առաջարկությունների համար

բ. Գրասենյակ վերադառնալու նստաշրջան – վիճակագրական գրասենյակներում աշխատանքի եղանակներ (նստաշրջանի առաջարկ) – քննարկման և առաջարկությունների համար

գ. ՄԱԿ-ի Գլոբալ աշխարհատարածական տեղեկատվության կառավարման նախաձեռնության (UN-GGIM) հետ համատեղ նստաշրջան: Եվրոպա (նստաշրջանի առաջարկ)– քննարկման և առաջարկությունների համար

դ. ՄԱԿ ԵՏՀ-ի կողմից ընդունված Պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքների 30-րդ ամյակը– քննարկման և առաջարկությունների համար

ե. 2022թ. ԵՎԿ-ի լիագումար նստաշրջանի համար նախնական օրակարգ և ժամանակացույց

V.2022թ. հաստատման համար ԵՎԿ-ի ուղեցույցներ և առաջարկություններ
ա. Զբաղվածության նոր ձևեր և զբաղվածության որակ – քննարկման համար

բ. Երեխաների, դեռահասների և երիտասարդների վիճակագրություն – քննարկման համար

գ. Միգրացիայի և անդրսահմանային շարժունակության չափման համար տվյալների նոր աղբյուրների օգտագործում – քննարկման համար

դ. Պաշտոնական վիճակագրության հիմնական արժեքները – քննարկման համար

ե. Վիճակագրական գործունեության արդիականացված դասակարգում (CSA) – քննարկման համար

VI.ՄԱԿ ԵՏՀ-ի վիճակագրական ծրագրերի աշխատանքային փաստաթղթեր – գրավոր խորհրդակցության միջոցով քննարկման համար
VII.Հաջորդ հանդիպումների ժամկետները ու վայրերը – քննարկման համար
VIII.Այլ հարցեր:

Հայաստանը հանդես եկավ ելույթներով «Վիճակագրական օրենսդրություն», «Համագործակցություն մասնավոր տվյալների տրամադրողների հետ», «Վիճակագրական գործունեության արդիականացված դասակարգում (CSA)» թեմաներով:

▪Արդյունքները

Մասնակցությունը Բյուրոյի նիստին հնարավորություն ընձեռեց քննարկելու և ծանոթանալու վիճակագրության տարբեր ոլորտների մշակման և վարման լավագույն փորձին, վերջին զարգացումներին, ուղեցույցներին և առաջարկություններին, ամրապնդելու վիճակագրական ներուժը ու մոդեռնիզացնելու պաշտոնական վիճակագրության համակարգը, ինչպես նաև առաջարկություններով ապահովել Հայաստանի ներդրումը միջազգային վիճակագրական փաստաթղթերում:

▪ Նշումներ

Այցելության ծախսերը ֆինանսավորվել են ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից:

Հայաստանի Հանրապետության Վարչապետի 2022 թվականի փետրվարի 9-ի N 167-Ա որոշման համաձայն գործուղումը պետք է լիներ 2022 թվականի փետրվարի 21-ից 25-ը: Սակայն, իմ խնդրանքով, գործուղման բոլոր ծախսերը ֆինանսավորող հրավիրող կողմը կարողացել է Երևանից մեկնումը կազմակերպել ս.թ. փետրվարի 22-ին: Հետևաբար, գործուղման մեջ գտնվել եմ ս.թ. փետրվարի 22-ից 25-ը:

ՀՀ վիճակագրական կոմիտեի
նախագահ Ս. Մնացականյան